

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԸ ՈՐՓԵՍ ԲԱՆԱԳԵՏ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)


Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գարեգին Հովսեփյանը հայագիտության այն անխոնջ երախտավորներից է, որոնց գիտական վաստակը չի սահմանափակվում գիտության մեկ գլխավոր խնդրով կամ բնագավառով։ Օժտված լինելով բնատուր տաղանգով և հայրենի երկրի ու Ծվրոպայի ուսման լավագույն օջախներում ստանալով փայլուն կրթություն, նա իր գիտակցական ողջ կյանքը նվիրում է Հայաստանի պատմության, արվեստի և մշակույթի ամենատարբեր խնդիրների ուսումնասիրությանը։ Միջնադարյան Հայաստանի պատմություն, արվեստ, հնագիտություն, վիճագրություն, գրչարվեստ, մատենագրություն, ժողովրդական բանահյուսություն՝ ահա մոտավոր շարքը Դ. Հովսեփյանին շահագրգռած գիտական ոլորտների, որոնց ընդհանուր կամ մասնակի հետազոտություններով նա ստեղծել է գիտական մնայուն արժեքներ։

Ծնվել է 1867 թ. դեկտեմբերին Զիվանշիր գավառի Մաղավուղ (Զարդախու) գյուղում։ Նախնական կրթությունը ստանում է Մաղավուղի նորարաց դպրոցում, ապա 1878 թ. ընդունվում է Շուշիի հայոց թեմական հոգևոր դպրոցի նախապատրաստական երկրորդ դասարանը։ Նյութական անապահովության պատճառով երկու տարի ընդհատումներով սովորում է հիշյալ գրադպրոցում և ի վերջո կիսատ թողնում ուսումը։ Միայն 1882 թ. բարեկամների միջնորդությամբ Գարեգին Հովսեփյանին հաջողվում է ընդունվել էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որի լսարանական բաժինը ավարտում է 1889 թ.։ 1888-ին,

տակավին ճեմարանի սան, Գ. Հովսեփյանը սարկավագ է ձևանագրվում և դառնում էջմիածնի միաբան։ Նույն իսկ տարին «Արարատում» տպագրած «Նուսավորիչ և Հայաստանեայց եկեղեցին» հոդվածով փաստորեն սկզբնավորվում է նրա ապագա գիտական բեղմնաշատ գործունեությունը։

1892 թ. ամռանը բազում խոշընդոտներից հետո. Շրմանյանի միջնորդության շնորհիվ էջմիածնի վանական իշխանությունները Գարեգին Հովսեփյանին ուղարկում են Գերմանիա՝ ուսանելու։ Հինգուկես տարի ուսանելով Հայպցիգր, Հալեի և Էբուլինի համալսարաններում և մասնագիտանալով հատկապես աստվածաբանության և փիլիսոփայության պատմության մեջ, 1897 թ. Գ. Հովսեփյանը ավարտական քննություններ է հանձնում Հայպցիգի համալսարանում։ Որպես ավարտական թեղ նա համալսարան է ներկայացնում «Մի կամքի վարդապետության ծագումը հայ և հույն աղբյուրների քննադատությամբ» աշխատությունը (տպ. Հայպցիգում 1897 թ.), որի համար ստանում է փիլիսոփայության դոկտորի աստիճան։ Նույն իսկ տարին վերադառնալով էջմիածին, արեղա է ձևանագրվում և կարգվում ճեմարանի աստվածաբանության և հայ մատենագրության ուսուցիչ։ Այնուհետև սկսվում է Գարեգին Հովսեփյանի գիտական ու եկեղեցավարչական գործունեության բեղուն շրջանը։ 1900 թ. Գ. Հովսեփյանը նշանակվում է Թիֆլիսի առաջ-



նորդարանի փոխանորդ, 1901—1904 թթ.՝ Ծրեանի թեմական դպրոցի վերատեսուչ, 1905 թ.՝ Գևորգյան ճեմարանի տեսուչ, 1906—07 թթ. վարում է «Աշարատ» հանդեսի խմբագրությունը, Գրեթե նույն ժամանակաշրջանում նա մասնակցում է Մառի կազմակերպած Գառնիի պեղումների հնագիտական արշավախմբին, Այգ նույն ժամանակ ճասախի ակունքների մոտ նա հայտնաբերում է Տրդատի հունարեն նշանավոր արձանագրությունը, Հնագիտական այգ և նման աշխատանքների համար Մառի առաջարկով Գ. Հովսեփյանը ընտրվում է Պետերբուրգի կայսերական հնագիտական ընկերության անդամ:

1911 թ. նկարիչ Ծ. Թազևսյանի հետ ճամփորդում է Ծրուսաղեմ ու Կ. Պոլիս և ընդօրինակում ս. Հակոբյանց վանքի ու Պոլսի Ազգային մատենադարանի ձեռագրերից կարևոր մանրանկարներ, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին նա ավարտում է «Հայ մանրանկարչական քարտեզ» կապիտալ աշխատությունը, որը 1914 թ. տանում է Բեռլին տպագրելու, սակայն վերահաս պատերազմը խանգարում է հիշյալ ձեռնարկի իրականացմանը: 1916—1917 թթ. կրկին նշանակվում է Գևորգյան ճեմարանի տեսուչ, 1917 թ. ձեռնադրվում է եպիսկոպոս: 1918 թ. անձնուրացարար մասնակցում է Սարգարաթաղի հերոսամարտին և արժանանում քաջության Գեորգիեյան շքանշանի: 1920 թ. Դ. Հովսեփյանը կարգվում է համալսարանի հայ արվեստի և հնագիտության ամբիոնի պրոֆեսոր, միաժամանակ Ալ. Բաժանյանի և Աշխ. Քալանթարի հետ միասին՝ Հնությունների պահպանման կոմիտեի անդամ: 1921 թ. դառնում է էջմիածնի գիտության ինստիտուտի գիտաշխատող: 1927 թ. ընտրվում է Ռուսաստանի, Ղրիմի և Նոր-Նախիջևանի թեմի առաջնորդ: 1934 թ. որպես կաթողիկոսի լիազոր նվիրակ և ներկայացուցիչ ճամփորդում է սփյուռքում, 1938 թ. ընտրվում է Ամերիկայի թեմի առաջնորդ, իսկ շորս տարի անց՝ 1943-ին Մեծի տան Կիլիկիո կաթողիկոս և հոգևոր այդ գերագույն պաշտոնում էլ մնում է մինչև իր արգասավոր կյանքի մայրամուտը (1952 թ.). իր այս եկեղեցա-վարչական, մանկավարժական ու հասարակական եռանդուն գործունեության ընթացքում Գարեգին Հովսեփյանը մեծ խանդավառությամբ ու նվիրվածությամբ զբաղվում է գիտական մեծարդյուն աշխատանքով: Նրա գրչին են պատկանում մի քանի տասնյակի հասնող տպագիր նշանավոր երկեր և անտիպ մնացած գիտական մի վիթխարի ժառանգություն՝ հայագիտության տարբեր բնագավառներին նվիրված: Նրա գիտական տպագիր ողջ ժառանգությունը սովորաբար բաժանում են չորս խմբի.

1. Կրոնական-եկեղեցական հոդվածներ:

2. Պատմա-բանասիրական և մատենագրական ուսումնասիրություններ և հրատարակություններ, որոնցից հիշարժան են՝ «Խոսրովիկ թարգմանիչ», «Սխիթար Սասնեցի» (1899), «Թովմա Մեծոփեցու կյանքը» (1914), «Հովասափ Սերաստացի» (1918), «Սխիթար Այրիվանեցի» (1931):

3. Պատմա-հնագիտական և հայ արվեստի ու մշակույթի վերաբերյալ ուսումնասիրություններ, հիշատակելի են «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ» (1902), «Գրչության արվեստը հին հայոց մեջ» (1913), «Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից» (1930), «Հավուց թառի ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ» (1937), «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» (4 պրակով, 1935, 1943, 1944, 1951), «Խաղրակյանք կամ Պոռչյանք հայոց պատմության մեջ. պատմագիտական ուսումնասիրություն» 3 մասով (1928, 1942, 1942—43), «Հիշատակարանք ձեռագրաց», I հատոր (1951) և այլն:

Նվ, վերջապես, Գարեգին Հովսեփյանի գիտական շահագրգռություններին արժանացած վերջին բնագավառը ժողովրդական բանահյուսությունն է, որի շուրջը հեղինակի ստեղծած գիտական արգասիքների քննությանն ու արժեքավորմանն էլ նվիրված է սույն հոդվածը:

* * *

«Սասնա ծռերի» հայտնագործումից ընդամենը մեկ տասնամյակ էր անցել, երբ 1886 թ. հունվարի սկզբներին Մանուկ Արեղյանը էջմիածնում մոկացի պանդուխտ Նահապետից դրի է առնում մեր նոր ժողովրդական վեպի երկրորդ տարբերակը:

Այդ նույն տարում ճեմարանի նորընծա դասատու երիտասարդ Արեղյանին աշակերտում էր ընդամենը երկու տարով իրենից կրտսեր Գարեգին Հովսեփյանը: Միմյանց գրեթե հասակակից ուսուցչի և աշակերտի միջև ծայր է առնում մի մաքրմիկ բարեկամություն: Նույն տարում Արեղյանի առաջնորդությամբ Անի և Հայաստանի այլ հնավայրեր կատարած այցելությունները, Արեղյանի անձնական օրինակը ժողովրդական բանավոր մշակույթի գնահատման նկատմամբ մեծ սեր են առաջացնում Հովսեփյանի մեջ դեպի սեփական ժողովրդի նյութական ու հոգևոր մշակույթի պանծերը: Արեղյանի անձնական օրինակն ու խրախուսանքը այնքան վարակիչ էին ու հրապուրիչ,

որ հրիտասարդ Գ. Հովսեփյանի գիտական անդրանիկ նախասիրությունն է դառնում ժողովրդական բանահյուսությունը և մասնավորապես՝ ժողովրդական վեպը: Արեղյանը թեպետ 1887 թ. թողնում է էջմիածինը և փոխադրվում Շուշի, սակայն կապը նրա և իր նախկին աշակերտի միջև չի ընդհատվում: 1890 թ. ամռանը Արեղյանը, որ արդեն երրորդ տարին էր, ինչ թողել էր ճեմարանը, Թիֆլիսից վերադառնում է էջմիածին և Գ. Հովսեփյանի հետ միասին շրջում Արագածոտն գավառի գյուղերը՝ բանահյուսական նյութեր և հատկապես ժողովրդական վեպի նոր տարրերակներ գրանցելու: Մի քանի գյուղ անցնելուց հետո Արեղյանը հիմնականում է և վերադառնում էջմիածին: Գ. Հովսեփյանը Ապարանի Զամրու, Ափնա և Ղաղանջար գյուղերից գրառում է «Սասնա ծռերի» Լրեթ նոր տարրերակ՝ Մշո բարբառով, և բանահյուսական ու աղագրական զանազան այլ նմուշներ: Բացի այդ, էջմիածնի պանդուխտ մոկացիներից նա գրի է առնում վեպի ևս երեք նոր տարրերակ, «Ռոստամ Զալ» հայ-իրանական վեպը, վիպական մի շարք երգեր և այլն, և հաջորդ իսկ տարին գրանց, բացառությամբ «Ռոստամ Զալի», «Փշրանքներ ժողովրդական բանահյուսություններից» ընդհանուր խորագրով ուղարկում է Թիֆլիս Մ. Արեղյանին՝ տպագրելու: Վերջինս լինելով Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության խմբագրական մասնաժողովի անդամ, Գ. Հովսեփյանի ժողովածուն հատուկ զեկուցումով ներկայացնում է խմբագրական մասնաժողովին: Որոշվում է վեպի նոր տարրերակները առանձնացնել և տպագրել առանձին գրքով, իսկ մնացած նյութերը հրատարակել առանձին: Հաջորդ տարին՝ 1892 թ. լույս են տեսնում Գ. Հովսեփյանի երկու ժողովածուն ևս՝ մեկը վեպի տարրերակները՝ «Սասնա ծռեր» վերնագրով, մյուսը՝ Հովսեփյանի գրած նախկին խորագրով՝ «Փշրանքներ ժողովրդական բանահյուսություններից»²: Նրկու գիրքն էլ Լրիտասարդ սարկավազի գիտական երախայրիցն էին և նշանավորում էին նրա արգասավոր մուտքը հայագիտության անդաստանը:

Գարեգին Հովսեփյանի ժողովածուները եղան տրամաբանական շարունակությունը այն մեծ շարժման, որ ընդամենը մեկ ու կես տասնամյակ առաջ իր «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ» կամ Մհերի դուռ» գրքով սկզբնավորել էր նրա անվանակից Սրվանձտյան վարդապետը: Բնավ պատահական չէր, որ հայ բանահավաքման ու բանագիտության սկզբնավորումը աղերսվում էր մեր նոր ժողովրդական վեպի հայտնադործման հետ. վեպ, որի նոր աւարներակների հետագա հայտնաբերումը մի կարևոր էջ ու իրադարձություն էր նշանավորում հայ բանագիտության պատմության մեջ:

ՆՅԵ 1880 թ. Արեղյանի տպագրած «Դավիթ և Մհեր» տարրերակը գիտական ու հասարակական շրջաններում պակաս հետաքրքրություն առաջ չբերեց, քան Սրվանձտյանի հայտնաբերածը, և ապա նշանավորվեց վեպի երկրորդության ենթապատվով, ապա Գ. Հովսեփյանի գրի առած տարրերակների հանդես դալը այլևս կասկած չէր հարուցում վեպի համազգային բնույթի ու Հայաստանի տարրեր մասերում լայն տարածված լինելու իրողության վերաբերյալ: Բացի այդ, զգալապես փոխվում էր գիտական պատկերացումը վեպի կառուցվածքի և բովանդակության մասին: Վեպի մինչ այդ գրառված երկու պատումներում իսպառ բացակայում էր Առյուծաձև Մհերի ճյուղը, իսկ Հովսեփյանի Ապարանից գրանցած պատումում ամբողջությամբ երևան էր գալիս վեպի այդ նոր բաղադրիչը: ՆՅԵ նախորդ պատումներում հերոսների դիցական-տարերային ծագման մասին հիշատակություն չկար, և հերոսների ընկալությունն ընդհանուր գծերն էին միայն վեպի իսկական հետադոտողին՝ Մ. Արեղյանին իրավունք տալիս իր «Ազգային վեպ» ուսումնասիրության մեջ կանխատեսելու հերոսների դիցական ծագումը և վեպի ապագա գրառվող տարրերակներից հուսալու իր կանխագուշակման հաստատումը³. ապա Հովսեփյանի գրառած մոկաց պատումներից մեկում երևան եկան հերոսների ջրից սերվելն ու նրանց աւարերային այլ հատկանիշները (ծովի հատակից հրեղեն ձի, կայծակի թուր, զենք ու զրահ՝ ձեռք բերելը, ջրային տարերթից հզորանալը և այլն): Մինչդեռ Սրվանձտյանի, Արեղյանի, ինչպես նաև իր՝ Հովսեփյանի գրառած վեպի պատումները առայժմ հավաստում էին վեպի տեղագրական Լրկու՝ Մշո և Մոկաց տարրերակների առկայությունը, ապա «Սասնա ծռերի» առաջաբանում Հովսեփյանը հավաստում էր նաև Սաւեո պատումի առկայությունը, նրա աւարերությունը եղած պատումներից և ցավում այն ամբողջությամբ գրի չառնելու համար⁴: Ինչ Հովսեփյանը վկայում էր լոկ խոսքով, չորս տաս-

¹ «Սասնա ծռեր. Եասունցի Դավիթ ժող. վեպի երկու նոր վարիանտներ, գրի առավ Գարեգին Սարկավազ», Թիֆլիս, 1892, էջ Ը—Թ:

² «Փշրանքներ ժողովրդական բանահյուսություններից», Թիֆլիս, 1892, Ժողովրդական նյութեր, գիրք Ա, գիրք Գ:

³ Մ. Արեղյան, Ազգային վեպ, Մուրճ, 1889, էջ 1751:

⁴ «Սասնա ծռեր», Թիֆլիս, 1892, էջ Ը:

նամյակ անց միայն գործնականում ապացուցեց 'Ն. Մելիք-Օհանջանյանը, Սասունցի Թամո Դավթյանից դրառելով առայժմ գիտութիւնը հայտնի Սասնո միակ պատումը:

Ժողովրդական վեպի նկատմամբ երիտասարդ սարկավազի պատմական երախտիքը սոսկ հիշալ առավելություններով չի սպառվում: Եթե այդ բոլորի հետ միասին նկատի առնենք նաև Զամրուի ընդարձակ պատումի վիպական համապատասխան մոտիվները տողատակին Ափնայի և Ղազանֆարի տարբերակներով բաղդատելը, որով մեծապես հարստանում էր վեպի բովանդակությունը, ինչպես նաև մոկաց երեք պատումների տարբեր մոտիվների տողատակերին դրված համեմատությունները, ապա կարելի է հավաստյալ պնդել, որ հայ բանագիտության պատմության մեջ վիպական բանահյուսության հուշարձանների բաղդատական բնագիր կազմելու կանխափորձը պատկանում է Գ. Հովսեփյանին:

Բացի այդ, Գ. Հովսեփյանի մոկացի Հովհանից գրառած «Սասնա ծռերի» պատումը աչքի է ընկնում իր գեղարվեստական բացառիկ արժանիքներով՝ նյութեղ ու պատկերավոր լեզվով, երգվող բանաստեղծական հատվածների առատությամբ, բովանդակության հարստությամբ, հատկանիշներ, որոնք պայմանավորված էին վիպասացի բացահայտ տաղանդով: Եվ «Սասնա ծռերի» պատմության մեջ մոկացի Նախո քնուռ և ալաշկերտցի Թրոյենց Մանուկի պատումների կողքին է իրավամբ դասվում նաև մոկացի Հովհանի այս պատումը:

Պատմա-բանագիտական կարևոր արժեք էր ներկայացնում նաև Գարեգին Հովսեփյանի երկրորդ ժողովածուն՝ «Փշրանքները»: Բանահյուսական տարբեր տեսակների այս հավաքածուն ազգագրական շրջանների ընդգրկմամբ նախորդի նման սահմանափակվում էր հիմնականում Մոկուով ու Ապարանով, չհաշված Թալինից գրառած մի քանի երգերը, սակայն բանահյուսական տեսակների ընդգրկումով խիստ բազմազան էր և հարուստ: «Փշրանքները», անկախ իր փոքր ծավալից, ընդգրկում էր հեքիաթներ, առակներ, ավանդություններ, վիպական, հոգևոր, քնարական, աշխատանքային, հարսանեկան և ծիսական այլ երգեր, հմայական աղոթքներ, անեծքներ և օրհնություններ, հանելուկներ, ինչպես նաև Ապարանի կյանքն ու կենցաղային տարբեր սովորույթները պատկերող ազգագրական նկարագրություններ: Բանահյուսական ու ազգագրական նյութերի զգալի մասը նորություն էր հայ բանագիտության համար: Բավական է նշել, որ մոկաց բարբառով վիպական շորս ծավալուն երգերից երկուսը՝ «Աւլան աղան» և «Նարեկացին» առաջին անգամ էին հրապարակ գալիս: Միակության արժեքով է գնահատվում «Արարանի կյանքից» ազգագրական-կենցաղային հակիրճ, բայց հարուստ նկարագրությունը, որ ցայսօր մնում է ազգագրական տվյալ շրջանի կենցաղագրության միակ պատկերը: Հովսեփյանի ժողովածուի նյութերը գնահատելի են նախ և առաջ իրենց ազգագրական ու բանահյուսական ընդհանուր նշանակությամբ, իբրև Մոկսի և Ապարանի ժողովրդական բանահյուսության ինքնատիպ նմուշներ, իբրև բանահյուսական տարբեր տեսակների մեծարժեք փոփոխականներ: Ինչպես սույն հավաքածուի բանահյուսական նյութերը, այնպես էլ «Սասնա ծռեր» վեպի քննարկված պատումներն ու 1905 թ. հրատարակած հայիրանական «Ռուստամ Զալ» ժողովրդական վեպի Հովսեփյանի գրառումը, աչքի են ընկնում ոճաբարբառային յուրահատկությունների պայանության խիստ ճշգրտությամբ ու հարազատությամբ, բանահյուսական նյութերի գիտական մատուցման պատշաճ որակով: Երկու ժողովածուն էլ օժտված են մի ընդհանուր առաջաբանով, բարբառային բառերի բացատրություններով ու բառարանով: Իսկ երբ նկատի ենք առնում, որ երիտասարդ բանահավաքի երկու ժողովածուն էլ հրապարակ եկան այն ժամանակ երբ ասպարեզում ազգագրական-բանահյուսական ժողովածուները հազվադեպ էին, ապա պարզ է դառնում գիտա-պատմական այն մեծ արժեքը, որ ունենալու էին և իրոք ունեցան Հովսեփյանի գրքերը հայ բանագիտության պատմության համար:

Գ. Հովսեփյանի հրատարակած երկու ժողովածուն էլ ժամանակին բարձր գնահատության արժանացան Մ. Աբեղյանի կողմից: «Նոր-դարի» մի քանի համարներում⁵ նա ճշգրտորեն արժեքավորեց թե՛ «Սասնա ծռերի» նորահայտ տարբերակների և թե՛ «Աւլան աղան» վիպերգի ու ս. Գևորգի մասին եղած ավանդության պատմական, առասպելա-դիցաբանական և կուլտուրա-ազգային որոշակի արժանիքները: Աբեղյանն իր մասնագիտական վերլուծություններով Հովսեփյանի հրատարակած բանահյուսական նյութերը դրեց իրենց բանագիտական դնահատության արժանի բարձրության վրա:

Սակայն Գ. Հովսեփյանի մատուցած ծառայությունը հայ բանագիտությանը սոսկ բանահավաքչությամբ չի սպառվում:

«Սասնա ծռերի» սկզբում, երկու ժողովածուին էլ վճարեերող սեղմ առաջաբանում, նոր ճեմարանավարտ Հովսեփյանը, առաջնորդվելով ժամանակի, հատկապես ողջ բանագիտության ու

⁵ «Նոր-դար», 1892, X.№ 163, 165, 1893, X.№ 7, 8, 9.

գրականագիտության նշանավոր ներկայացուցիչներ Բուսլանի, Կորչի, Վեսելովսկու և ուրիշների տեսական գրույթներով, ժողովրդական բանահյուսությունը բնութագրում է իբրև «ժողովրդական կյանքի և գաղափարների բնական արտացոլում», իբրև «գեղարվեստական պարզ ու անպաճույճ ձևերի մեջ ժողովրդական ոգու, նրա հույզերի ու ձգտումների, մտքի ու երևակայության թռիչքների մարմնավորում, իբրև ժողովրդի «մտավոր և բարոյական էությունը» կազմակերպող, նրան «դիպի գաղափարական և գեղասիրական աշխարհը» առաջնորդող գեղարվեստական համապարփակ մի իրողություն: Ժողովրդի կյանքն ու հոգեբանությունն արտացոլելու և ժողովրդի միտքն ու բարքերը դաստիարակելու կարևոր դերից բացի երիտասարդ բանագետը ժողովրդական բանահյուսությունը գնահատում էր կուլտուր-պատմական մեկնակետից ևս: Հետևելով Կորչին, նա ժողովրդական բանահյուսությունը արժեքավորում է գրականության պատմությունը, գրական ժանրերի ծագումն ու զարգացումը և առհասարակ գեղագիտական տեսությունները ուսումնասիրելու տեսակետից: Նա ժողովրդական բանահյուսությունը դիտում է հատկապես պատմական առումով, իբրև ժողովրդի պատմության ուսումնասիրության կարևոր աղբյուր: «Պատմությունը ազգի քաղաքակրթության աստիճանաբար զարգացումն է նկարագրում,— գրում է նա.— իսկ առանց ժողովրդի ծանոթության անկարող ենք իմանալ, թե ինչ առաջադիմություն է արել քաղաքակրթությունը ասորիշուրյան մեջ, որի հիմքը հասարակ ժողովուրդն է: Ծանոթանալով ժողովրդի առօրյա կյանքի, նիստուկացի, սովորությունների, կրոնական-բարոյական գաղափարների և այլ հայացքների հետ՝ ընդունակ կլինենք որոշելու ժողովրդի հոգեկան զարգացման աստիճանը»⁶:

Հովսեփյանը առանձնապես պատմական մեծ արժեք է տալիս ժողովրդական վեպին, որի մեջ «գտնում են շատ անգամ հեուկյան հետքեր, որոնց ուսումնասիրությունը լուսարանում է պատմական այս կամ այն հարցը: Ժողովրդական վեպի թեթև ուսումնասիրությունն իսկ մեղ տանում է պատմության միջին և ավելի հեռու շրջանները: Վեպի մեջ երևում են պատմական կյանքի զարգացման աստիճանները, ժողովրդի առօրյա զբաղմունքները, հավատալիքները, սնոտիապաշտությունը»⁷, ուրիշ կերպ ասած՝ ժողովրդի արտաքին և ներքին կյանքը իր էական կողմերով: Հովսեփյանը բանահյուսությունը պատմական կարևոր աղբյուր է դիտում ոչ միայն բովանդակության իմաստով, այլև ձևի: Ժողովրդական բանահյուսության տարբեր ու բազմազան բարբառներով հորինված նմուշները Հովսեփյանը համարում է հայ բարբառագիտության և առհասարակ հայոց լեզվի պատմության ուսումնասիրման անգնահատելի վավերականներ: Իսկ բանահյուսական նմուշների, հատկապես ժողովրդական երգերի տաղաչափական ձևերի ուսումնասիրությունը, հեղինակը համարում է հայկական տաղաչափության բուն առանձնահատկությունները և հայրենի հին տաղաչափությունը պարզաբանելու և վերականգնելու կարևոր պայման:

«Սասմա ծոերի» փոքրիկ առաջաբանում երիտասարդ Գարեգին Հովսեփյանի ժողովրդական բանահյուսությանը տված հիմարտացի բնութագիրը վկայում էր հայագիտության մեջ տվյալ առարկայի տեսական առավել համակողմանի ըմբռնման մասին: Եթե «Սասմա ծոեր» և «Փշրանքներ» մեծարժեք ժողովածուներով Գ. Հովսեփյանը գիտական աշխարհին ներկայանում էր որպես տեսական լուրջ ըմբռնումներով օժտված մի բանահավաք, ապա 1898—99 թթ. «Արարատում» տպագրած «Ժողովրդական բանահյուսության հետքեր միջնադարյան տաղարաններում» աշխատությամբ և 1905 թ. «Ազգագրական հանդեսում» հրատարակած «Բոստամ Զալ» ժողովրդական վեպով ու կից ուսումնասիրությամբ նա հանդես է գալիս իբրև բարձր մակարդակի բանագետ-հետազոտող, եթե 1892 թ. Գ. Հովսեփյանը իր հետևում թողած ուներ ձեմարանական ուսումնառության տարիները միայն, ապա 1898 թ. արդեն նա անցել էր գերմանական համալսարանների բարձրագույն դասընթացները, որպիսի հանգամանքը չէր կարող իր կնիքը չթողնել նրա հետազոտությունների տեսական որակի վրա:

«Ժողովրդական բանահյուսության հետքեր միջնադարյան տաղարաններում» աշխատությամբ Հովսեփյանը երևան է բերում հմուտ ձեռագրագետի և բանագետի իր ունակությունները: Միջնադարյան տաղարանների, ինչպես նաև արդեն տպագիր տաղերի ուսումնասիրության հիման վրա հեղինակը առաջին անգամ հայ բանագիտության պատմության մեջ ուղադրություն է դարձնում հայ հին բանաստեղծական հուշարձաններում ժողովրդական բանահյուսության նմուշների աուկայության փաստին, և ապա առաջ է քաշում միջնադարյան տաղարանները նաև բնագիտական տեսակետով հետազոտելու խնդիրը:

6 «Սասմա ծոեր», էջ Ծ:

7 Նույն տեղում:

8 Տե՛ս «Արարատ», 1898, էջ 544—551, 1899, էջ 44—47:

Հարցերն ուղադրավ էին ոչ իրենց դրվածքով միայն, այլև այնու, որ պրական ու բանահյուսական նյութերի համադրումով և միջնադարյան մի քանի ժողովրդական երգերի հրապարակմամբ Հովսեփյանը հանգում էր մի շարք էական եզրակացությունների, որոնք ունեին արդեն նախնական ուսումնասիրության արժեք:

Ցուցահանելով միջնադարյան տաղարաններում առկա ավետիսների, անանուն և հեղինակային մի քանի երգերի (սճաղ երկնուց և գետնուց, սճաղ...ի վերայ ծովուն եւ նաւի», սՅաւտըվորս ով շինեաց իւր տուն», Առաքիւ վարդապետին վերագրվող «Ոտանաւորս ի վերայ կիրակէի», Բլկուրանցու «Գեղ մըն կայր նարեկ կասեն») նույնություններն ու նմանությունները ժամանակին կենցաղավարող ժողովրդական համապատասխան երգերի հետ, Հովսեփյանը իրավացիորեն եզրակացնում է, որ միջնադարյան նման երգերի մի մասը ուղղակի ժողովրդից է անցել տաղարանները, իսկ մյուս՝ առավել փոփոխված մասը ժողովրդական երգերի ու ավանդությունների վերամշակումներ են. անհատ հեղինակների ձեռով կատարված: Ուրեմն, ոչ թե գրքային ազդեցություն բանահյուսության վրա, այլ ընդհակառակն, ժողովրդական բանահյուսության գորեղ ազդեցություն միջնադարյան գրականության վրա, գրապատմական մի կարևոր երևույթ, որը երկու տասնամյակ անց Մանուկ Աբեղյանը պետք է իմաստավորեր որպես կյանքի ու գրականության աշխարհականացման պատմաշրջանի կամ, այլ կերպ ասած՝ հայ միջնադարյան գրականության ուրույն վերածննդի արտահայտություններից մեկը:

Ուղադրավ են հատկապես գրական և բանահյուսական ժանրերի փոխառնչության մասին Դ. Հովսեփյանի արած մի քանի նկատողությունները. նա, օրինակ, հարց է հարուցում հետազոտել ժողովրդական կոծի երգերի և զանձարանների հոգևոր երգերի ու ողբերի առնչությունը պատմա-ազգագրական այն իրավացի հիմունքով, թե սԳանձարանները, հոգևոր երգեր և ողբեր... հառաջ են եկել ժողովրդի յուր ննջեցյալները կոծելու սովորությունից»: Նույն կերպ նա առաջ է քաշում նաև գրական և ժողովրդական ավետիսների ու առակների բացահայտ աղբյուրները հետազոտելու խնդիրը:

Տեսնում ենք, այդպիսով, որ Հովսեփյանի աշխատությունն իր առաջադիր նպատակից ավելի հեռուն է գնում. նա միջնադարյան տաղարանները բանագիտորեն հետազոտելու հարցի հետ միասին իր հարցադրման ոլորտն է ներառնում ժողովրդական բանահյուսության և միջնադարյան գրականության փոխառնչության ուսումնասիրման խնդիրն առհասարակ: Հովսեփյանի սույն աշխատությունն ու նշված հարցադրումները առավել կարևոր արժեք են ձեռք բերում մեղ համար և այն առումով, որ ցարդ հիշյալ խնդիրները մեր բանագիտության մեջ մնում են չհետազոտված:

Դ. Հովսեփյանի բանագիտական վերջին հետազոտությունը «Ռոստամ Զալ» ժողովրդական վեպն է: Նյութը, որ դարձել էր Հովսեփյանի գիտական շահագրգռության առարկան, իրանական հուշակավոր «Շահ-նամեի» հայկական պատումներից մեկն էր, որ ընդունված է կոչել հայ-իրանական ժողովրդական վեպ: Թեման հայ բանագիտության համար նորություն չէր: Տակավի՛ն 1884 թ. Գար. Սրվանձտյանը իր «Համով-հոտով» բերել էր իրանական վիպասանության զորավազներից մեկի հայկական պատումը՝ «Սալմանն ու Ռոստոմն» վերնագրով¹⁰, իսկ 1900 թ. Բագրատ Խալաթյանը «Этнографическое обозрение» հանդեսում, ապա հաջորդ տարին Փարիզում առանձին գրքով լույս էր ընծայել «Իրանի հերոսները հայ ժողովրդի մեջ» աշխատությունը, ուր հեղինակի առաջաբանի հետ բերված էին հայ-իրանական ժողովրդական վեպի հինգ պատում Ապարանից, Սուրմալուից և վանեցի գաղթականից գրառած: Թեպետ հրապարակի վրա կար հայ-իրանական վեպի վեց տպագիր պատում, սակայն Դ. Հովսեփյանի գրառած «Ռոստամ Զալ» դրանց ամենատարբեր ծավալով, ամբողջականությամբ, «Շահ-նամեի» հետ ունեցած բովանդակության իր հարազատությամբ և գեղարվեստական որակով բացառիկ արժեք էր ներկայացնում: Հետազոտական առումով ևս Դ. Հովսեփյանը հայ բանասիրության մեջ առաջինը չէր: Իրանական ժողովրդական վեպի հայկական պատումները Բ. Խալաթյանի կողմից արդեն արժանացել էին ուսումնասիրության: Սակայն, եթե Բ. Խալաթյանի ուղադրությունը հիմնականում սեկել էր հայ-իրանական վիպական-բանահյուսության փոխառնչությունների և «Սասնա ծռերի» ու «Շահ-նամեի» հերոսների արենակցական հարաբերությունների վրա, ապա Դ. Հովսեփյանին շահագրգռում էր երկու կարևոր խնդիր. ա) իր գրառած պատումի «Շահ-նամեի» հետ ունեցած վիպական փոխհարաբերության պարզաբանումը և բ) «Ռոստամ Զալ» հայ-իրանական վեպի գեղարվեստական ատկանիշների բացահայտումը: Հարցադրումները ըխում էին գիտական առաջադիր խնդրի բնույ-

¹⁰ «Արարատ», 1898, էջ 545:

¹⁰ Գ. Սրվանձտյանց, Համով-հոտով, Կ. Պոլիս, 1884, էջ 201:

թից, այսինքն այն բանից, թե ինչն է օտար ու եկամուտ և ինչն է հայրենին ու բնիկը և գնահատության արժանին հայ-իրանական վեպում:

«Ռոստամ Զալի» և «Շահ-նամեի» քաղցատումներից Զոհասիրական պարզում է, որ՝ ա) Ռոստամի ծննդից մինչև Սիավուշի վեպը ներառյալ հայ-իրանական վեպում վիպական սյուժեն, թեպետ իր մանրամասների մեջ խիստ տարբեր, զարդանում է հիմնականում «Շահ-նամեին» զուգընթաց, իսկ մնացած հատվածները, հավանաբար (որ հավաստել էր արդեն խալաթյանը) XI—XII դարերում, Ֆիրդուսու հետևողությամբ կազմված «Բարզու-նամե» պոեմի վիպական մոտիվների հիմամբ ևն հորինվել: Բ) «Ռոստամ Զալի» ծաղման վիպական հիմքն են կազմում իրանական վեպի հնագույն դիցաբանական շերտերը, որոնց վազեմիությունը հասնում է հին արիական ընդհանուր դիցաբանությանն ու բանահյուսությանը, որ վկայված են հին հնդկական Ռիգ Վեդայով ու հին իրանական Զենդ Ավեստայով: Գ) Թե՛ «Շահ-նամեի» և թե՛ «Բարզու-նամեի» «Ռոստամ Զալում» առկա վիպական սյուժեները, մոտիվներն ու կերպարները ձևավորվում ու զարգանում են ոչ թե իրենց հիմք հանդիսացած հիշյալ վեպերի դեղարվեստական սկզբունքներով, այլ բոլորովին ազատ վերամշակությամբ, բուն ժողովրդական տեղծագործություններին հատուկ վիպական պարզ ու անպաճույճ նկարագրներով և գերծ են Ֆիրդուսու «Շահ-նամեի» կամ «Բարզու-նամեի» գրական-անհատական հատկանիշներից:

Ընդհանուր եզրակացությունն այն էր, որ «Ռոստամ Զալ» վեպի հայկական տարբերակը հայկական միջավայրում զգալապես կերպարանափոխվել է և ձևեր է բերել ուրույն հայկական երանդ:

«Ռոստամ Զալ» հայ-իրանական վեպը քննելիս Զոհասիրական, հաշվի առնելով վեպի պատմական ատաղձի օտար և արդեն ընդհանուր իրանագիտության մեջ հետազոտված լինելը, այն իրավացիորեն դուրս է դնում իր հետազոտության ոլորտից և հիմնական ուշադրությունը բնեղում է վեպի գեղարվեստական յուրահատկությունների վրա, այն բանի, որի մեջ երևան են գալիս հայ ժողովրդի ներդրած ստեղծագործական ունակությունները: Մեթոդապես հարցադրումը միանգամայն ճիշտ էր և դիտական: Հարցը, սակայն, մեթոդի մեջ չէր միայն, այլև հեղինակի ստեղծագործական խառնվածքի: Բնավորությամբ լինելով բարձրաճաշակ մի գեղագետ (որ ապացույցն է հետադարձում հայ արվեստին ու մանրանկարչությանը նվիրած իր հետազոտություններով), պատմական երևույթների ու բանասիրական փաստերի մեջ միշտ պատշաճն ու գեղեցիկը բացահայտող ու գնահատող Զոհասիրական «Ռոստամ Զալ» ժողովրդական վեպի պարզ ու անպաճույճ ստեղծագործական ձևերից վեր է հանում ու գիտական պատշաճությամբ արժեքավորում վեպի գեղարվեստական ստույգ արժանիքները. նա վեպից վերառած որոշակի դրվագների գեղագիտական վերլուծություններով, երբեմնակի «Շահ-նամեի» համապատասխան տեղիների համեմատությամբ, բացահայտում է «Ռոստամ Զալի» հորինվածքի գեղեցիկ տրամաբանական կառուցվածքը, «Շահ-նամեից» շեղվող վիպական միջադեպերի գեղարվեստական պատճառաբանվածությունը, ժողովրդական-վիպական հնարանքների առավել բանաստեղծականությունն ու գեղեցկությունը, «հերոսների զոհողության և խոսքերի հոգեբանորեն ճիշտ և բնական նկարագրությունը», վեպի «կտրուկ, կենդանի և պատկերավոր արտահայտության եղանակը», որի մեջ մեծ դեր են խաղում վիպական-բանաստեղծական լեզուն, կենդանի ոճերն ու դարձվածքները, ասացվածքներն ու համեմատությունները:

Վեպի գեղարվեստական ամբողջ վերլուծությունը առաջ է տարվում գեղագիտական բարձր ճաշակով, համոզիչ ու հիմնավոր տրամաբանվածությամբ: Վեպի գեղարվեստական կողմերի քննություններն ու «Շահ-նամեի» հետ կատարված համեմատություններն ի վերջո նկարավորություն են տալիս Զոհասիրական արժեքավորելու «Ռոստամ Զալ» վեպի ընդհանուր կուլտուր-պատմական նշանակությունը հայ մշակույթի պատմության մեջ: Մեր բանահյուսության համար իրավամբ սահմանափակ համարելով «Ռոստամ Զալ» վեպի պատմական արժեքը, Զոհասիրական, սակայն, գտնում է, որ «մեր քաղաքակրթության մի բեկորն է Ռոստամ Զալի յուրացման պատմությունը. ինչպես բյուզանդական կամ արաբական քաղաքակրթությունը յուրացրել, բայց ազգային կերպարանք և հոգի ենք տվել, նույնն ենք տեսնում և այստեղ փոքր չափով: Ռոստամ Զալի նյութն ըստ էության փոխառություն է, բայց նյութի արտահայտության և դեպքերի կապակցության մեջ ժողովուրդը շեղվելով աղբյուրից որոշ չափով ինքնուրույնություն է պահպանել և յուր հոգու դրոշմը դրել նորա վերա Այս տեսակետով էլ նա նշանակություն ունի մեր բանահյուսության պատմության համար»¹¹:

¹¹ «Ռոստամ Զալ. Ժուլ. վեպ, գրի առավ Գ. վրդ. Զոհասիրական», արտատպված «Ազգագրական ինստիտուտ», Թիֆլիս, 1905, էջ 24—25:

Հովսեփյանի այս տեսակետը, արդարացիորեն որդեգրեց ու առավել հիմնավորեց ապագա հայ բանագիտությունը: Գ. Հովսեփյանի քննարկվող հետազոտությունը ունի մասամբ՝ ընդհանուր արևելագիտական և մասամբ՝ հայագիտական արժեք: Եթե ընդհանուր արևելագիտական առումով նա բացահայտում էր իրանական վեպի հայկական միջավայր փոխանցվելու և զեղարվեստական կերպափոխման ենթարկվելու խնդիրը, ապա «Ռուստամ Զալի» զեղարվեստական հատկանիշների վերլուծումով նա փաստորեն առաջինը հայ բանագիտության սյուսմության մեջ զեղագիտական հետազոտության էր ենթարկում ժողովրդական վիպական ստեղծագործությունը և այն բարձրացնում ու արժեքավորում էր իբրև այդպիսին: Այս է Հովսեփյանի նշված հետազոտության պատմական արժեքը:

Այդպես, ուրեմն, իր գիտական բազմաձևիստ ու բազմարդյուն գործունեությունը սկսելով հայ ժողովրդական բանահյուսության մեծարժեք նմուշների զրառմամբ և ուսումնասիրմամբ, Գարեգին Հովսեփյանը դառնում է հայ բանագիտության երախտաշատ սկզբնավորողի՝ Գարեգին Սրվանձտյանի հիմնադրած պատմական մեծ շարժման անդրանիկ հետևորդներից մեկը: Նա քանահյուսական նյութերով և ուսումնասիրություններով իր մնայուն վաստակն է ներդնում հայ ժողովրդագիտության մեջ, Սրվանձտյանից և Արեգյանից հետո դառնալով այն նվիրական անուններից մեկը, որոնց միշտ էլ խորին երախտագիտությամբ ու ազնիվ պատկառանքով են հիշում և հիշելու են ներկա և գալիք սերունդները: